

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ


Ե. ՓՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

S & orին. ԱՐՇԱՆՈՅՍ րազրի

ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ողջ դահիւն. 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ

Տարեկան Ձրակի 20

Վեցամսեայ « 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խոնարհութեանս վրայ է :

Խոնարհութեանս ուղղութեամբ  
գրութիւնիս եւ չ'եմ տրուիր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHAEOLOGIE  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԳՈՎԱԲԱՆՈՂԸ

(Շարն . նախորդ թիւէն և վերջ)

Աւելորդ է ըսել թէ՛ հզակամ գծադրութիւն մ'է որ մեծ քրիստոնեայ Պետութիւն մը, ինքզինք պարտաւոր զգայ, ո՛ր և է նկատումներով, գլխաւորաբար իր մասնաւոր օգտին համար — այսպէս ոչորմելի կարգադրութիւն մը, ինչպէս է Թուրքիոյ ամբողջութիւնը — նախամեծար համարել :

Շատ ցաւալի պիտի ըլլայ հաւանիլ բարոյականութեան մը, որ ինքզինքը ազատ կը զգայ առաւելութիւններ ստանալու այսպիսի գնով :

Գալով Սուլթանին, երազել կարծեցի երբ իր խորին ուսումնասիրութեան և քրիստոնեայ գաղափարներուն և զգացմանցը վրայ գրուածը կարգացի :

Չեմ գիտեր թէ մէկը կրնայ գիտուն համարուիլ կտորիկ մը ֆրանսերէն գիտնալով, այն ալ չ'կրնար բաւական խօսիլ կամ հասկնալ : Սուլթանին միակ ֆրանսացի հեղինակն է Ջօլան, որուն գրքերը թուրքերէն թարգմանուած են իր անձնական գործածութեանը համար . գիտութեան վրայ գաղափար խօս չ'ունի : Միւսիւսմաններուն ամենէն կրօնամոլը և մոլեռանդը ըլլալը իր թագաւորութեան ընթացքին մէջ պատահած դէպքերով ապացուցուած է : Նա պատմութեան մէջ պիտի երևար ո՛չ թէ իբր Տաճկաստանը փրկող Սուլթան, այլ իբր կործանիչը : Երբոր գահը իր եղբոր Սուլթան Մուրատէն յափշտակեց, Տաճկական Պետութիւնը 40 միլիոն բնակիչ ունէր . այս թիւը 18 միլիոնի իջեցուց :

Ռուսներն , Պուլկարիա , Սերպիա , Վօնթէնէկիո , Պոնիա , Հէրձէկօվինա , Արևելեան Րուսիլի , Մակեդոնիոյ մէկ մասը, Կիպրոս , Եգիպտոս , Կրետէ , Թունուզ գրքերէն եւրոպական և ասիական ստացուածքները՝ իր կառավարութեան օրով կորսուեցան Թուրքիոյ համար :

Ալ այդ երկիրը կայսրութիւն մը չ'է և ոչ իսկ փոքրիկ թագաւորութիւն մը — փոքրիկ անիշխանականութիւն մ'է : Եթէ եւրոպական փոխադարձ նախանձը չ'ըլլար, մասնաւոր Անգլիոյ լաւ ճանչցուած արտաքին, քաղաքականութիւնը, Սուլթանը և ոչ իսկ այդ փոքրիկ անիշխանականութիւնը կրնար պահել : Ասիկա Լորտ Սալըզպըրի թրքական վայրագութեանց տագնապալից վայրկեաններուն յաճախ կրկնած է . « Տաճկաստանը այսօր ա՛լ հիւանդ չ'է , կատարելապէս մեռած է » :

Որչափ ալ մեծ ըլլայ այս երկրին մէջ « Պէն Հուրի » հեղինակին համբաւը, իր երևակայական յայտարարութիւնները հաստատ, խոր համոզումը խախտելու տեսակէն չ'են, որ կազմուած է պատմական դէպքերու լոյսին մէջ : Արդարեւ այսօր ամենափոքր տարակոյս չ'կայ պատասխանատու դիւանագէտներու մտքին մէջ , այս սոսկալի ջարդերուն կազմակերպութեան և գործադրութեան հրամայողի մասին :

Հիմա ամեն երկիրներու մէջ բազմաթիւ հիւպատոսական տեղեկագիրներ կան , անուրանալի կերպով այս սոսկալի ջարդերուն պատասխանատուութիւնը հաստատելու համար :

Կ'ուզեմ նաև մէկ երկու դէպքեր ալ յիշել :

Տիրքանակերտի ջարդին ժամանակ Ֆրանսական Գեր-Հիւպատոսին կեանքը վճարուածի մէջ էր : Ֆրանսական դեսպանը անմիջապէս կէս գիշերին Ելազը գնաց և պահանջեց որ անմիջապէս ջարդերը դադարին . իրեն պատասխանեցին որ Սուլթանը անկողինէն էր, թէպէտ ինքը լաւ գիտէր : Գեսպանը սպառնացաւ որ եթէ հիւպատոսին կեանքը մէջ խաղայ, կառավարչին գլուխը պիտի պահանջէր և հաւանականաբար Սուլթանին նաւահանգիստ մը պիտի ուժակոծուէր :

Գեսպանը հաղիւ թէ պալատէն մեկնեցաւ, Սուլթանին փութացուցած հեռագիրներէն ջարդը կը դադարէր . ասիկա կը պատկերացնէ հրամաններուն աղբիւրը և Սուլթանին պատասխանատուութիւնը :

Իր խօսքը մինակ բաւական էր ամէն կէտի վրայ ջարդերը դադարեցնելու : Ամեն մարդ կը յիշէ այդտղ ջարդերը , նոյն իսկ դեսպաններու և եւրոպացուց աչքերուն առջև . հոն կատարեալ պատեհութիւն կար դէպքերու ընթացքը ուսումնասիրելու :

Նոյնպէս կը յիշուի որ Խարբերդի Միսիոնարներու հաստատութիւնները այրուեցան թրքական բանակի թնդանօթներէն, և դարձեալ այդ ահուելի ոճրին հեղինակները թուրք կանոնաւորներն էին, քիւրտի հազուստով ծպտեալ : Պէտք է նաև յիշել թէ՛ նոյն իսկ այդ քիւրտերը զինավարժուեցան և իբր զինուոր միաձուլեցան ջարդերէն առաջ և Սուլթանը այդ գունդերուն իր բուն անունը չ'որհեց, իբր երաշխաւորութիւն և ծածկոց գործուելիք ջարդերուն :

Դէպքերու շղթան շատ երկար է բայց ծաւալը փոքր է :

Վերջացնելէ առաջ սակայն կուզեմ ա-

ւելցնել թէ՛ եթէ Ջօրավար Վէլլէսի նման դիրքի և համբաւի տէր մարդ մը իր արժանաւորութիւնը կը մոռնայ, ներկայ ժամանակի ներօնին հետ եղբայրակցելու աստիճան, ազնիւ կլատութեան գաստատանք կայ, համաշխարհային համբաւով սքանչելի դիւանագէտին, որ վեհ բարկութեան մը վայրկեանին, որը կարապի երգն էր իր մեծ ասպարէզին, Սուլթանին ճակտին վարկանջնջելի « Մեծ ՄԱՐԴԱՊՊԱՆ » մակդիրը : Ինչ տիտղոս որ ալ ասկէ յետոյ ըսեն քանի մը ամերիկացի Սիգօֆանդներ Սուլթանին համար, իրենց դժբաղդութեան հուշակաւոր մեծ Երեւոնի բառերը միշտ արձագանք պիտի ըլլան մարդկութեան ականջին, այդ անզգամին համար և այդ մեծ խօսքէ և պիտի մնայ ամենէն լաւագոյնը զինքը յատկանշելու և պատմական ճշմարտութիւնը հազորդելու համար :

Կ. Ս. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ .

Պօսթօն ( Ամերիկա )

ԱՐՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՈՏՈՏԱՉԵՒԻՔ ( սեսորիս )

ԵՐԻՉՈՐԴԻՔ ( րեկիա , Եէրիա )

Փորագլուխ երեզորդը՝ որ բաղադրամբ նախորդներուն քիչ կը գտնուի, կը զանազանի անոնցմէ իր կազմակերպական յատկանիշներով : Երկարածիկ գլխուն կողմնական մասերուն վերայ երկու փոքր ունի, եւ զուրկ է ծոցներէ ու ճանկիկներէ : Փորագլուխին երկարութիւնը չորս մեթրը չ'անցնիր . իր օղակները աւելի լայն են և ճնշողական գործարանները այդ օղակաձև բեկորներուն միջին մասին վրայ կը գտնուին : Այս որդին ծագումը շատ որոշ չ'գիտցրուի : Կը տեսնուի մասնաւոր յարեւմտեան Ջրուիցերիա , Պալթիքի ծովափունքը, Եուէտի, Ռուսիոյ և Բոլոնիոյ մէջ : Անոր մագաղ թրթուրին ազատօրէն ջուրերուն վրայ լողալ տեսած է . Տր . Նոյս , եւ որ կը կարծէ թէ այս սերմիկները պարունակող գետերուն ջուրերէն խմող անձինք ընդհանրապէս կը վարակուին այդ ախտէն :

Ուրիշ ականաւոր քննիչ — րժիշկներ ու հեղինակներ անոր հետզհետէ աւրստուելը կը վերագրեն ուղղակի մէկ քանի ձուկերու գործածութեան , յորս մասնաւորաբար նշանակելի են Ֆէրրա եւ Սաղմոն ձուկերը՝ որոց ստացիւնը աւատօրէն կը գտնուի Լէման լճին մէջ :

Մարդուն կազմութեան մէջ երեզորդին միակ հանգրուանը նուրբ աղիքն է . եւ որովհետեւ մարտդական վերջին ու կարեւորագոյն գործողութիւնը հոգ կը կատարուի, եւ մարտուած սընընդարար հիւթը նուրբ աղեաց մէջ գտնուող մասնաւոր խողովակներուն միջոցաւ անցնելով

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

արեան շրջանին մէջ կը սնուցանէ ու կը կեն-
դանաւորէ զայն, մեծաւ մասամբ կը խանգար-
ուի այս անխորժ հիւրի ներկայութեամբ. ըստ
որում, որքը սննդեան լաւագոյն ու ազնիւ մա-
սը իւրացնելով կ'աղքատացնէ արեանը՝ յորմէ
կը ծագի անարիւնութիւն (անեմի) : Արեան այս
անբնական ու չքաւոր վիճակը յորինուածին
պարբերական տկարացման նպատակով՝ կը գիւ-
րացնէ այլեւայլ մանրէներու (վիտրոպ) ներա-
ծումը, եւ հետեւաբար դիմադրաւել չ'կրնալով
անոնց սպառիչ բնութեան՝ աներեւակայիւր արի-
տերու զարգացման պատճառ կ'ըլլայ :

ԱնՏԱՆԻՇԻՔ . — Այս որքը թէեւ սովորա-
բար չստիպաներուն մէջ կը գտնուի, սակայն
մանուկներն ալ բոլորովին աղատ չ'թողուր, եւ
մերթ տեսնուած են եօթնամեայ տղաքներ երի-
զորդէ տագնապող, որոց վիճակը աւելի ծանր
եւ հետեւանքը աւաղելի եղած է, ըստ որում
որքին մեծութիւնը անհամեմատական է մար-
մնոյն մեծութեան : Այս պարտգային, աղայոց
ստացած սնունդով չ'բաւականանալով այդ դա-
զիր ու վիթխարի կենդանին՝ անոնց կենսական
բնածին զօրութիւնն ալ օր ըստ օրէ սպառել
կ'ստիպուի, որոյ կը հետեւին ջղաձգութիւն,
սեռողութեան անզօրութիւն, կուրութիւն եւ
խուլութիւն : Եթէ մանուկը վաղընդիոյթ չը
դարմանուի մահը անխուսափելի է :

Այս որքը ունեցող անձը ընդհանրապէս ան-
արեւն կ'ըլլայ արդէն յիշուած պատճառով . քե-
թը մերթ կը քերուի, եւ փորուն ալ այն մասը՝
ուր կ'ծկուած է անտունը, նշմարուելու աստի-
ճան կ'ուրի : Երբեմն աղետոյ խցում ալ կրնայ
պատահիլ, որ վտանգաւոր ըլլալ կ'սպառնայ
անուշադիր գտնուելով : Վարակուող անձը չա-
փազանց ուտելու ստիպուած է . գրեթէ չ'յազե-
նար, եւ անօթի եղած ատեն սաստիկ խիթ կը
զգայ փորուն մէջ՝ որ կը փարատի սննդարար ու
առատ ճաշ մը ընելէ վերջ : Որովայնը ստէպ գո-
լորչներով կը բեռնաւորի եւ աննեղաշնակ
կրկններու տեղի կուտայ : Փորհարութիւն եւ
պնդութիւն փոփոխակի կ'ընկերանան : Այլեւայլ
պարագաներու մէջ, ջղային շատ մը խանգա-
րումներ միմիայն երկզորդի մը ներկայութեան
արդիւնքն ըլլալ նկատուած են :

Վերջերս Լիոնի մէջ դժուարաբոյժ ճոնա-
զարութեամբ առաւապող անձ մը այս ախտէն ա-
պաքինեցաւ բոլորովին, արտաքսել տալով մի-
այն ունեցած երեզը :

Ի մի բան՝ այս որքին պատճառաւ յայտնը-
ւող բոլոր ծանօթ հիւանդագին երեւոյթները
կրնան խիստ տկարացնել ներքին գործարաննե-
րը, փճացնել գնդերները, խաթարել համայն
յօրինուածը, սպառել կենսական կորովը, եւ
ուր ուրեմն առաջնորդել ի գերեզման :

ՏՐ . Կ . Գ . ՈՒՋՈՒՆԵԱՆ

(Շարունակելի .)

ՍՅՆԵՆԻ ԱՅԼՔ

ՊԱՏԵՐԱՋՄԻ ՄԵՂՈՒՆԵՐ . — Մեղուին
ամեն աշխատասէր յատկութիւնները լաւ
ճանչցուած չ'են :

Եթէ մեղուաբոյժի մը հաւատանք՝ որ
վերջերս փորձով հաստատած է, մեղունե-
րը կրնան ի հարկին լրատար աղանիւնե-
րուն տեղը բռնել աւելի մեծ առաւելու-
թիւններով :

Այս անասնիկներէն մէկ քանի հատը
որ իրենց փեթակներէն հեռու տարուած
էին եւ որոց թեւերուն վրայ մանրալուսա-
նկարային գրեր փակցուած էին, կատարե-
լապէս իրենց բնակարանը գտան :

Ահա՛ այսպէս պարզ փեթակ մը պա-
տերազմի ժամանակ կրնայ ամենէն դոր-
ծունեայ եւ ամենէն թանկագին տեղեկու-
թեան դիւան մ'ըլլալ :

Նամակատար եւ կամ լրատար — ինչպէս
որ կուզէք — մեղուն, լրատար աղանիւնէն
անտեսանելի անցնելու անհուն առաւելու-
թիւններ պիտի ունենայ :

ԱՄԻԱՆԹԻ ՏՈՒՆ . — Լսած էինք որ
Անգլիոյ մէջ թշտութեան կը շինուին, հի-
մա ալ ամիանթէ շինելին կ'իմանանք :

Ամիանթէ տուները կը շինուին դաւա-
թականներու գործածութեան համար, ա-
տենք քակուելի տուներ եւ առաջին կարգի
գործնական բնակարաններ են :

Այս տուները որ կտոր կտոր կրնան
քակուել խաղալիքի պէս մինչեւ 7 մեծ սեն-
եակներ կրնան պարունակել նոյն իսկ լու-
գանքի սրահ մը իր բոլոր յարակից մասե-
րով :

Ինչպէս որ դիտենք ամիանթը անկի-
զելի է պաղին եւ տաքին գէմ շատ թան-
կագին զովալուցիչ յատկութիւններ կը
վայելէ եւ արժէքը շատ սուղ չ'է :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնտոն 29 սեպտ . — Չինաց կայսրը հը-
րովարտակով մը Զարին չնորհակալութիւն
կը յայտնէ, Ռուսական զօրքերը Բէքինէն
հանած ըլլալուն համար :

Եանկ-Չէի փոխարքաները կը կարծեն
որ Անգլիա եւ Գերմանիա պատերազմ պի-
տի հրատարակեն :

Լոնտոն 30 Սեպտ . — Կոմս Վօն Վալ-
աէրսի Սեպտ . 27 ին Թիէն-Չին հասաւ :

Շահը Կ . Պոլիս հասաւ եւ խիստ մտեր-
մական տեսակցութիւն մ'ունեցաւ Սուլթա-
նին հետ :

Բէքին 30 Սեպտ . — Կայսերական հը-
րովարտակ մը դատարանի առջեւ կը խրկէ
Իշխան Թուանը :

Լոնտոն 1 Հոկտ . — Մամուլը միաբե-
րան կը գնահատէ Լորտ Ռօպըրթսի անուա-
նումը իբր ընդհանուր սպարապետ :

Չօնի-Քօնի 1 Հոկտ . — Թնդանօթակիր
« Ռօպէն » շոգենաւը ռմբակոծեց Լիւք-Լաօ
գիւղը, վրէժը հանելու համար անգլիական
շոգենաւի մը, որուն վրայ ընկնելը քարեր
նետած եւ հրացանաձողութիւն իսկ ըրած էին :

Բրէթօրիա 1 Հոկտ . — Երբ անգլիական
զօրքերը Պօէրնեքէն առնուած ռազմամթեր-
քը կը փճացնէին, սարսափելի պայթում մը
տեղի ունեցաւ եւ 20 պիւտր սպանուեցան :

Բարիզ 1 Հոկտ . — Ռուսիան կը հերքէ
Մանչուրիին միացման լուրը . Բէքինէն կը
քաշուի, եւ դեռսպանտունը Թիէն-Չին կը
փոխադրէ :

ԻԳՆԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ

ԳԵՐՁԱԿ
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պսպ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր,
հանրածանօթ Անգլիացի վաճառական — գերծակ
ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ
աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն
կատարելապէս հմուտ եւ փորձառու, այս ան-
գամ հոտատուած է հանգուցեալ նուպար Փա-
շայի Տայրօթին դիմացը, նորաչէն խանութնե-
րուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յա-
ճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան,
արհեստի նրբութիւն տեսնելով, նորածեւու-
թեանց զանազանութիւններ գտնելով, եւ մա-
նուանդ՝ որ ամենէն կարեւորն է, չստիպուր
վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր
զգեստներ ունենալով :

— Եթէ ստոյգ են քաղաքիս մէջ այլ-
տրամ տարաշայտութիւններն, պաշտօնակուն
հեռագրաւ ծանուցուած է Եգիպտոսի Ս-
ուալնորդ Գեր . Յովաէփ Եպիսկոպոս Այվազ-
եանի մտաւորաւ դալուստը :

— Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկե-
րութեան Ատենապետ Մեծ . Տիար Առաքել
Պէրպէրեան եւ Ազն . Տիկին Մարի Ա . Մ .
Պէրպէրեան, որ օգափոխութեան համար
երեք ամիսներ առաջ կրեաէ մեկնած էին,
չարաթ օրը քաղաքս ժամանած են :

Տիար Ա . Մ . Պէրպէրեանի գալուստը
իրաւունք կուտայ մեզ յուսալու թէ՛ Որ-
բասիրաց Ընկերութիւնը դարձեալ գործու-
նեութեան շրջանի մէջ պիտի մտնէ եւ Որբոց
մտուկին մէջ այժմ պատրաստ, մտաւորաւ
պէս 100 եգիպտ . սիւււոյ գումարը, հետու
հետէ պիտի գործածուի իր նպատակին .
ինչ որ մինչեւ ցարդ, բնականաբար շատ մը
իրաւացի պատճառներով անձեռնմխելի մը-
նացած էր :

— Աշգ . Առաջնորդարանի փաստաբան
Մեծ . Տիար Յակոբ Սօսատուրեան, որուն օ-
գափոխութեան համար Եւրոպա մեկնումը
ծանուցած էինք այս էջերուն մէջ, երկկ
կէս օրէ վերջ քաղաքս ժամանած է :

— Նոյնպէս քաղաքս հասած են Մեծ .
Տիար Կարապետ Միանօֆի երկու զաւա-
կունքը Ազնիւ Պարոնայք Գրիգոր եւ Տիգ-
րան Միանօֆ, որոնք չորս հինգ ամիսներէ
հետէ Եւրոպա մեկնած էին Պ . Տիգրանի հի-
ւանդութեանը դարման մը գտնելու համար
եւ ինչպէս կը լսենք, յաջողած են : Մեր
խնդակցութիւնը անոնց անձնուէր հօրն ու
մօր :

Մուխթար բաշա Աւստրիական « Գլէօբա-
թրա » շոգենաւով վերադարձաւ եւրոպայէն,
եւ դէպ՛ ամայս վերջերը Գահիրէ պիտի
գայ :

Անցեալ օր Ապտինի պալատը հասած
հեռագիր մը կ'ըսէ թէ Խտիվուհին աղջիկ
զաւակ մը ծնաւ որ չորրորդն է : Գրտենք որ
այս ուրախ դէպքին մերձեցումն էր Խտի-
վին աճապարանքով դարձին պատճառը :

— Սեպտ . 9 ի գումարումէն վերջ օր-
ըստօրէնոր կալմելի Լապան-Ընթերցատուն
ընկերութեան ձեռնարկը կը կնճռատի եւ
գայթակղելի ըլլալու վիճակի մը կը մատ-
նուի :

Այս կերակէի գումարումը շատ ազմը-
կալից եղած է եւ իրաւունք կուտայ մեզի
մտածելու թէ՛ քանի մը Լապաններ միան-
գամայն պիտի կազմուին . բայց Սեպտ . 9 ի
Նախագահին ինչ ըսենք, որ կերակի օրը
կծիկը դրած է :

Բիչ կը մնայ որ խորհուրդ տանք մեր
հոչակաւոր Նախագահին այդ տեսակ խաւնոր
իշի գործերու միջամտելէ հեռի կենալ,
այսպէսով դոնէ ասկէ առաջ իր վրայ կազ-
մուած լաւ գաղափարները չ'էին խախտէր :
Բայց ոչխարը սարէն անցաւ :

ԼՈՒՍԻՆԵԱՆՔ . — Մէլիք Ս . Գալիթ
Բէկի հրատարակած ԼՈՒՍԻՆԵԱՆՔ անուն
գրքէն, որ ինչպէս ծանուցած էինք 400)
կտոր Արաբիկի որբերուն նուիրուած էր
հեղինակին կողմէ, այս անգամ յիշեալ գրք-
քերը աւրոյշովին զրկուած է « Գահիրէի
Հայոց Որբասիրաց Ընկերութեան » եւ կը վա-
ճառուի ի գին 10 դահեկան ողջի :

Բնականաբար մեր ազնիւ ազգային ք պիտի փափաքին ունենալ սոյն հեղինակութեանէն, երկու պատճառներով . նախ՝ սատարելու համար Որբասիրական ձեռնարկին . երկրորդ՝ ունենալու համար հեղինակութիւն մը որ շահեկան և միանգամայն կարի հետաքրքրական է :

—Վերջին պահուն կը տեղեկանանք թէ՛ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ իրմէ պաշտպանեալ 10 հատ որբերուն համար, առ հաշիւ 30 ժամ . սակի կը շրջէ Արարկերի Առաջնորդ Գեր . Մուշեղ Ծ.Վ. Սերոբեանին :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

—Պարսրճօնէն 19 Սեպտ . թուականաւ հետեւեալը կը գրեն :

Հոս խորհրդաւոր պատմութիւն մը կը պատի . քանի մը օր կայ անձանօթ մը տաճակական հիւպատոսէն խնդրեց որ իրեն ծածկադիր մը տան որով կարենայ ուղղակի Սուլթանին հետ բանակցել . Հիւպատոսը Սուլթանին կ'իմացնէ այդ առաջարկը և Սուլթանը հաճութիւն կուտայ որ ծածկագիրը իրեն հաղորդուի : Անձանօթը այն ժամանակ Սուլթանին կը հեռագրէ թէ՛ 6 հատ անիշխանականներ Պոլիս կը գտնուին և որոնցմէ մին Պրէստիի եղբայրն է , ու կ'առաջարկէ զանոնք ցոյց տալ իրեն , և թէ 4500 Ֆրանք . ճանապարհածախս տրուի :

Թէպէտև այս պատմութիւնը խաղարարութիւն մը և կամ խաբէութեամբ դըրամ շորթելու երեւոյթը ունէր , սակայն և այնպէս կ'երեւայ որ հիւպատոսը հրաման ստացած է 4500 Ֆրանքը վճարելու և անձանօթին խօստանալու որ 100000 Ֆրանք ալ իբր պարգև պիտի տրուի և թէ իր տընուած տեղեկութիւններով անիշխանականները ձերբակալուին :

Ձէյթունի մէջ Օգոստ . 9 ին հոգեւ մը ծագեր է , որ երեք ժամ տեւած է 16 տուն այրելով : Հրդեհին առաջը առնելու համար ուրիշ շատ մը տուներ ալ փլցուցեր են . ամբողջ կորուստը 1050 ժամ . սակի կը հասնի : Այս պատճառաւ բազմաթիւ ընտանիքներ անպատասպար ու թշուառ մնացեր են . 116 ընտանիք լեռներու մէջ կը բնակին տուն տեղ չունենալու համար :

Թ Ե Ր Թ Օ Ն

Ի Ն Չ ՈՒ Գ Ե Ն Ք Յ Ա Ջ Ո Ղ Ի Ր

ՏԵՍԻՒ Բ .

ՆԻՍՏ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ (ՏԵՍԱՆ Արշալոյս) ԹԻՒ 106 107 և 112)

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ատեանը բացուած է : ( իր խօսքը շարունակելով . ) Ինչպէս գիտենք . ընդժողովը վեց ամիսը մէկ անգամ կը գումարուի , մենք ինչպէս անցեալ անգամ որոշեցինք , կըրնանք ամբաստանագիր մը յորինել եւ բոլոր մեր ուզած անդամոց ստորագրել տալ , իրաւունք ձեռք բերելու համար :

ՇԱԹՕԵԱՆ . — Ձեռքը սեղանին վարնելով . սֆէրիմ պէ՛ , այսօր իսկ պատրաստելու է :

ԹԱԹՕԵԱՆ . — Կեցցէ սահմանադրութիւն . կեցցէ ԴՂԵԱԿ :

ՇԱԹՕԵԱՆ . — Կորնչի՛ն աղքատ դասակարգի մարդիկ , որոնք ստորին են իմ առջեւ եւ ճամբան տեսնելու բարեւելս անգամ չի գար . . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ահաւասիկ պատճէնը ամբաստանադրոյն . ( կը կարգայ մինչեւ որ կը հասնի ) « Սիբելի Ընկերք » , եթէ Վարդան Վասակին չը ներէր , Վասակ անկարող պիտի ըլլար չարիք

ՓԱՅԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔՐ

ՐԱՅ ՆԱՄՐԱԿ ԱՌ ՀԱՅՍ

(Շար . նախորդ թիւէն և վերջ : )

Գնեադատութեանս ճշգրտութիւնը լաւագոյն կերպով զգացնելու և թուրքերուն ազատամտութիւնը ոչ աւելի բացայայտաբար հասկցնելու համար կարծեմ թէ կը բաւէ ակնարկ մը նետել անցեալին վրայ :

1453 ին Մուհամէտ Բ . աշխարհակալը , որ իր դարուն ամենահզօր վեհապետն էր , Կ . Պոլիսը նուաճելուն հետեւալ օրը մեծ քաղաքավարութեամբ ընդունեց Յունաց պատրիարքը , և իբր գրաւական իր խողարարական ոգւոյն հանդէպ Յունաց , ընծայեց անոր ազամանդազարդ գաւազան մը , յայտնելով միանգամայն որ նուաճեալ ժողովուրդին փոյթեանդ պաշտպանը պիտի ըլլար :

Անոր թողը Սելիմ Ա . պատմական այն հզօր դէմքը , որ « տիեզերապետութիւնը խիստ անձուկ կը գտնէր իր կորովի և խոհուն գործունէութեան » ապագայի մէջ կրօնական ընդհարումներու և վէճերու տեղի չ'մնալու համար իր բոլոր քրիստոնեայ հպատակները մահմետականութեան դարձնելու փափաքը յայտնած էր : Իսկոյն Շէյխ-Իւլ-Իսլամը միջամտեց , և Սելիմին յայտարարեց որ գահընկեցութեան Ֆէրիշա մը պիտի հանէր , եթէ գործադրէր իր այն գիտաւարութիւնը , որ կը հակասէր շէրիաթի օրէնքի , և որդարութեան ոգւոյն : Միապետը , որ սակայն ՎԱՅՐԱԿ յորջորջուեցաւ , ակնածութեամբ խոնարհեցաւ շէյխին կատարելագէտ արգարացի արդեւքին առջև :

Այս անթերի արգարարութեան ոգւոյն շնորհիւն է որ Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակները կրցան պահպանել իրենց կրօնքն ու լեզուն , և հետեւաբար իրենց ազգութիւնը :

Եթէ մեր աչքը դարձնենք քրիստոնեայ եւրոպայի արարքներուն վրայ , այն միջոցին յորում Սելիմ այնքան հաւատարմութեամբ կը յարգէր կրօնային տգտութիւնը իր կայսրութեան մէջ , չ'պիտի կրնանք չ'զայրանալ : Ի բաց առեալ հրոյ և սրոյ մատնուած եւրոպայի աննկարագրելի վիճակը , և կաթոլիկներու և բողոքականներու եղբայրասպան կռիւները , Սպանիոյ ֆիլիբ

գործելու . արդ՛ այս օրինակը մեր առջեւ ունենալով , մենք պէտք է խիստ եւ անաչառ ըլլանք մեր մէջէն արտաքսելու համար քանի մը խոզվարարներ , որոնք կը յանդգնին առարկելու թէ՛ գաղտնականի կից անգղիական ճարտարագիտութիւն պէտք չ'է ըլլայ , մենք որ այս խոռոչուրդով կուզենք զղեակը բարձրացնել եւ այդ բարձր գղեակով ալ կ'ուզենք ազգի պատիւը բարձրացնել , որպէսզի օտարները նային , հիւսնան եւ սքանչանան , ըսելով , սէ յը սերբը արմենի են . . .

ԹԱԹՕԵԱՆ . — Խաչ վկայ հիանալի՛ ես , բացման օրը Պիտայի առաջին բաժակը կ'ինացդ պիտի խմեմ :

ՇԱԹՕԵԱՆ . — Ինչ կ'ըսես , պի հե՛րիք . պիտան ինչ է . Շամբանեա չ'ըսես . . .

ԱՄԵՆԲԸՄԷԿԷՆ . — Այո՛ , Շամբանիս , ԹԱԹՕԵԱՆ . — Հատ մը ըլլար ա՛յ ճակէինք հիմա :

Ա . — Ձգեցէ՛ք Շամբանեան , եւ գոնեակ մը պիտի առնեմ . . .

Բ . — Ես ալ :

Գ . — Նմանապէս :

Դ . — Այվան ողբաս , հատ մ'ալ ես :

(Սրճարանի կարտանը ներս կը մտնէ եւ ատեանը ինքնիրէն կը փակուի . . .)

Արտակարգ ԸՆԴՀԱՆՈՒՐ Ժողով (Տեսարանն է Մէնահուսթիւնի կից հոյակապ շէնքի փառաւոր սրահին մէջ : Այս գումար-

Բ . թագաւորը կենդանոյն այրելու համար հաւատաքննիչներու կը յանձնէր այն Մաւրիտանացիները , որոնք կ'ուզէին իրենց մահմետականութիւնը պահել . այն Մաւրիտանացիները՝ որոնք իրենց պերճափայլ քաղաքակրթութիւնը ներմուծեցին յեւրոպա և զարգացուցին , որոնք գիտութիւնը , գարութիւնը և արուեստը ծայրագոյն աստիճանի հասցուցին այն ժամանակ :

Արդէն հարկ ալ չ'է հին գարեբու գիմել , վանդի խորին ցաւով կը հաստատեմ որ քսաներորդ դարուն եւրոպան հեռու կը գտնուի գործադրելէ արդարութեան և կրօնական ազատութեան սկզբունքները , զոր թուրքերը պարծանօք կը յարգէին երեք հարիւր ութսուն տարի առաջ :

Այսօր Ռուսիոյ հպատակ կովկասիոյ Հայերուն չ'թողարարուի իրենց լեզուն խօսիլ ազատօրէն , և ո՛չ ալ իրենց ազգային պատմութիւնը ուսուցանել իրենց դպրոցներուն մէջ :

Արղաս-Լօրէնի մէջ՝ գերմանական լեզուն պաշտօնապէս ջնջեց ֆրանսերէնը , հակառակ բնակիչներուն կամքին : Մեր անցեալը որքան փայլուն է , այնքան տխուր է , աւա՛ղ , մեր ներկայն . և միայն Ապտիւլ Համիտ է պատասխանատու այս իրողութեան : Այն չարազէտ բռնութիւնը , զոր ժԶրգ. դարու մէջ ֆիլիբ Բ . կը գործադրէր կրօնքի պատրուակներով , այսօր Ապտիւլ Համիտ կը գործադրէ միայն իր քրահաճոյքին համար :

Եւրոպական դիւանագիտութեան առաջնորդները , իրենց վարմունքով կը մասնակցին այդ քրահաճոյքին , որուն թափած արիւնով ժամանակակից քաղաքակրթութեան պատմութեան էջերը յաւէտ ներկուած պիտի մնան : Անտարակոյս , ժամանակիս մեծ խորհողները , որոնք կը ճգնին մարդկութիւնը կատարելութեան ծայրագոյն կէտին հասցնել , ինձ գաղափարակից են այս խնդրոյն մէջ : Հետեւաբար , մենք իրարու ձեռք կարկառելու ենք՝ միանգամ ընդ միշտ և ամենայն վստահութեամբ : Այլ ևս մեզի համար ներքի չ'է յապաղել որքան աւուլ այնքան վտանգալի անգործութեան մը մէջ :

ման ներկայ ըլլալու իրաւունք վայելող անգամները յատկապէս պատրաստուած ՄՏԻՑ ՏՈՄՍԵՐՈՎ կ'ընան ներս մտնել : Երկու ոտիկան գրան մէջ կեցած են խաղաղութիւնը պահպանելու համար . . . : Ամենաչքեղ թիկնաթոռներու մէջ բազմած են Տնօրէն ժողովոյ անդամներն եւ կը խօսակցին :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Արդեօք կարելի՞ է ստուգել թէ՛ նշխարներն ( մտից տոմս ) իրենց տեղերը հասած են ժամանակին :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Այդ մասին կրնամ վստահեցնել ձեզ թէ՛ ինչպէս որ խնամով անդամոց ցանկը պատրաստեցինք , այնպէս ալ խնամով յանձնեցինք :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Սիսեանի համար ինչ ըրէք :

ՇԱԹՕԵԱՆ . — Նա թէեւ լաւ տղայ է , բայց նոր հագուստ չ'կրնար գտնալ այս փառաւոր տեղը գալու համար . այդ պատճառաւ յետաձգեցինք :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ինչպէս Սիսեանին , նոյնպէս Մարաշլեանին ալ չ'տուինք . թէեւ նա ալ բարի տղայ է բայց բնաւ երիւրէք չ'ունի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Շատ լաւ ըրած էք , պէտք է այսօրուրն սկզբունք ընենք շիբ մարդերով շրջապատուիլ :

(Այս խօսքին վրայ Թաթօեան թիկնաթոռնէն ելլելով հայիլիին կը մօտենայ . քուսիքը աչքէ կ'անցնէ , որուն կը հետեւին միւսները : Սրահի ժամացոյցը ժամը 3 րը կը նշանակէ ) :

(Շարունակելի)

Միասին աշխատենք անհետացնելու համար այն հարստահար ութիւնը, որուն տակ կը հեծէ մեր Հայրենիքը, վերահաստատենք Օսմանեան այն սահմանադրութիւնը, զոր Միտհաթ բաշա հրատարակեց, և Ապտիւլ Համիտ խափանեց:

Ես և իմ որդիքս՝ երբ Կ. Պոլսէն մեկնեցանք՝ չ'ունեցանք ուրիշ նպատակ բաց միայն ջանալ որպէսզի այդ օրինաւոր ծրագիրը իրականանայ: Ոչ Սուլթանին սպառնալիքները, և ոչ մեր իրաւանց՝ վրայ աւնոր հարուածները չ'պիտի խեղդեն մեր խղճին ձայնը:

Ինչպէս ես համոզուած եմ, դուք ալ պէտք է համոզուիք որ Ապտիւլ Համիտի կեղեքումներուն ձեզ նման ենթարկուած թուրքերուն հետ դաշնակցութիւն մը Օսմանեան կայսրութեան պատմութեանը այս կսկծալի մասին վերջ մը պիտի կրնայ տալ:

Ապտիւլ Համիտին « բաժանեա՛ զի տիրեցես » նշանաբանին, պատասխանենք միաբերան. « միութիւնը զօրութիւն է: »

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: Year, 1900, 1901, 1902, 1903, 1904. Rows show population statistics for various years.

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Table with 6 columns: Year, 1900, 1901, 1902, 1903, 1904. Rows show statistics for the 'Հրէից Բարեգործական' section.

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Նոր Կեանքի ի և Անանիոս ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս գիծին, գիւրագին զայնս գնելու:

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն զնեւ փափաքողներն կամ բաժանորդագրուել ուզողներն, կրնան գիծի՛ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՋԸ

Օսմանիյէ դեղատանին դիւնսի փողոցին մեջ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր, Հրատարակութեան Մանրագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշդապահութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ:

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պայտսիւն եւ Նուազածուաց խմբի Զօրանոցիւն ճիշտ դիւնսը

ՕՉԱՆԵՒՄ ՍԻՄՈՆԵԱՆ ԵՒ

ԴԱՆԻՎ ԼԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ:

Պատիւ ունին ծանուցանել Արդոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մարմերը կազդուրելու համար, կրնան գիծի՛ ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և ինտանով զարգարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ դրած է:

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները. ընտիր և թարմ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ:

Մասնաւոր խնամքով կը պատրաստուին ան արգածան և չամարակ (խոշապ):

Հոն գիծող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խտապահանջները գոհացնելու աստիճան:

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԻԱՐՋԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարեանց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԻԳՆԻՐԷ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօլի բազմազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Պօզօկրաֆներու:

Ա Ջ Դ

Գրիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Շանօեանի որդի Պ. Կարապետ Շանօեան 26 ամեայ Երիտասարդը Հայաստան ղեկավարեալ ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ Երիտասարդը:

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան:

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ:

ՀԱՅ ՃԱՃԱՐԱՆ ՄԻՋՐՈՆ ԵՂԱՐԱԲԻ ԳԱՋԱՆՃԵԱՆ ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊՍԶ

Նեով՝ Իւնիպիտեզ Դեղատանին դիւնսը

Որ և է կերակուր արտօրժան և սընընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համազմամբ որ սննդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր արտօրժակին թշնամանանք կ'ընէ:

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհուածութեամբ պիտի մեկնին:

Գիներն ԴԻՒՐԱՄԱՍՏԵԼԻ ԵՆ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ յ'Աղեքսանդրիա: